

# ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

## ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻ 1—12

ՅՈՒՆՈՒԱՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՂԴ. ՏԱՐԻ 1980

ՆԻԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

### ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵԾ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ (1711 թ.)

Երեւանի Պետ. Մատենադարանի No. 737 ձեռագիրը յայտնի է Երուսաղէմի հայոց պատրիարք (1715—1749 թթ.) եւ գրական գործիչ Գրիգոր Շղթայակրին ու նրա ժամանակաշրջանին վերաբերող կարեւոր վաւերագրերով: Այդպիսի նիւթերից է հենց Շղթայակրի գրչին պատկանող պատմական յիշատակարանը, որը 4+4 չափով է գրուած եւ կրում է «Յիշատակարան ի յոտը հանօղի զսակաւ բանս» խորագիրը (էջ 181բ—183բ):

Պէտք է յիշատակել, որ այս Յիշատակարանը ժամանակին յայտնի է եղել Սենեքերիմ Տէր-Յակոբեանին, որը նրանից օգտագործել է Վարդան Բաղիչեցուն վերաբերող հատուածը<sup>1</sup>: Նմանապէս Հ. Ներսէս Ակինեանը, որը 1920ական թուականների սկզբներին, երբ էջմիածնում էր գտնուում, Բաղէչի դպրոցի պատմութեան համար նոյն No. 737 ձեռագրից, մի շարք արժէքաւոր այլ նիւթերի հետ միասին, օգտագործել է նաեւ Շղթայակրի այս Յիշատակարանը<sup>2</sup>:

Ակինեանը համարում է, որ Շղթայակրի այս գրուածքը «Վիպասանութեան մը յաւելուածական մասն է»․ այդ «Վիպասանութիւն»-ը, որ կորած է, կարող է լինել Առաքել Դաւրիթեցու «Պատմութիւն»-ը կամ Դաւիթ Բաղիչեցու «Ծաղկաքաղ պատմութիւն»-ը, որ Շղթայակրը պէտք է տաղաչափութեան ենթարկած լինի եւ գրա՝ այդ «Վիպասանութեան» յիշատակարանն է մեր ձեռքի տակ եղած չափածոն<sup>3</sup>: Մեզ թւում է,

որ, ի բացակայութեան այլ կոուանի, կարելի է Ակինեանի հետ միասին այսպէս հասկանալ Յիշատակարանի Տ-րդ տունը («Ըզդէր վիպիս իմ ընթերցեալ, | Ի եղէ հոգւով յոյժ տոչորեալ, | Հանել ի յոտ տաղիւ չափեալ»): Ինչ էլ եղած լինի՝ այդ «Վիպասանութեան» տաղաչափումը կատարուած էր Ամբտողի վանքում՝ նախքան Վարդան Բաղիչեցու մահը (1704 թ.), իսկ այս յիշատակարանը գրուած է դրանից տարիներ յետոյ Կարինի Հնձուց վանքում՝ 1711 թուականին, երբ դէպքերի բերմամբ այնտեղ էր գտնուում հեղինակը (համտ. տուն 44—46):

Յիշատակարանի բուն նիւթը սկսում է Վարդան Բաղիչեցու գովասանքով եւ նրա գործունէութեան վերահանումով՝ դպրոցի հիմնումը Ամբտողում, եկեղեցիների եւ վանքերի շինարարութիւնը, գրական աշխատանքները, որոնքի եւ աղքատների խնամակալութիւնը եւ այլն (տուն 10—19)<sup>4</sup>: Ապա

<sup>4</sup> Վարդան Բաղիչեցու գործունէութեան վերաբերեալ Գրիգոր Շղթայակրին ունի արժէքաւոր մի ուրիշ յիշատակարան, որը գրուած է Բաղէչում՝ Ոձն.թ.—1683 թ. (տես Երեւանի Պետ. Մատենադարանի Ձև. No. 5501, էջ 243բ—244բ): Այստեղ կարգում ենք.

«Փառք...: Արդ որք հանդիպեք այսմ գրոցս, յիչեցէք ի Քրիստոս զքաջ բարունապետն Վարդան, եւ Աստուած ողորմի ասացէք իւրն եւ ծնողաց իւրոց, զի կրկին լուսաւորէջ գտաւ Հայոց. զի բազում եկեղեցիս շինեաց ի հիմանէ եւ բազում մոլորեալ մարդիկ դարձոց ի մեղաց յաստուածդիտութիւն՝ յորդարուի քարոզութեամբ իւրով. եւ բազում գիրս եւ գրել եւ գայլ հինս նորոգել զամենայն տեղեաց: Եւս առաւել զԱմիրդօլու վանքս ի հիմանէ շինեաց տներով եւ հնցներով (այսինքն «հնձաններով» — Յ.Ս.Ա.). եւ արդիւնացոյց բազում գրեանս ի սմա. եւ միարանս բազումս առաւել քան զՏաթևուսն, որ է յոյժ պայծառ սաղմոսերգութեամբ եւ պատարագօք, զոր տէր Աս-

<sup>1</sup> Ս. Տէր-Յակոբեան, «Վարդանայ վարդապետի Բաղիչեցուց Յուցակ գրոց Ամիրդօլու վանուց» յօդուածում, Արարատ, 1903, էջ 176—177:

<sup>2</sup> Հ. Ն. Ակինեան, «Բաղէչի դպրոցը 1500—1704», Վիեննա, 1952, էջ 264—266 եւ 340—344:

<sup>3</sup> Անդ, էջ 340—341:

պատմում է՝ Վարդանի մահից յետոյ մի խումբ միաբանները հեռանալը Ամրտուրից եւ հաստատուելը Գլակայ Ս. Կարապետի վանքում, վանքի աւերումը երկրաշարժից՝ 1708 թուականին, եւ վերաշինումը (տուն 20—31): Այնուհետեւ նկարագրում է Բաղէշի քուրդ իշխանաւորների զործ դրած բռնութիւններն ու կեղեքումները, որոնց հետեւանքով վանքն ընկնում է անտանելի պարտքերի տակ. իսկ այդ գրուածութիւնից ահաբեկուած՝ միաբանները թաքնուած են «ի խորափիտ տեղիս» եւ ապա «խոյս տուեալ» փախուստի են դիմում դէպի Կարին (տուն 32—38): Նրանք ասպնջականութիւն են գրտնում Կարինի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի մօտ եւ տեղաւորուում Հնձուց վանքում, որը թեմի առաջնորդանիստ վայրն էր: Այնտեղ Գրիգորը, Ներսէս Արծկեցու յորդորանքով, շարադրում է այս Յիշատակարանը եւ աւարտում 1711 թուականի մարտի 20-ի (հին տոմարով) երեքշաբթի օրը (տուն 39—46): Խօսում է թուրք-մոսկովեան պատերազմի մասին, բայց, բնականաբար, տեղեկութիւն չունի նրա ելքի մասին (տուն 47—48): Շարադրանքի շարունակութեան մէջ (տուն 49—55) Գրիգորը նախ խօսում է իր մասին, թէ անարժանաբար կարգուել էր Գլակայ վանքի վանահայր ու Տարօնի առաջնորդ<sup>5</sup> եւ

տուած հաստատուն պահեցէ: Եւ յայտ ամի ձեռնարկեալ է ի գործս՝ շինել անդս մեծամեծս վանիցն, որ սխուիք ասի, զի է յոյժ անհարթ եւ անհեթեթ վիճօք լցեալ. եւ ետ վարդապետն քարակոփացն զվէման հատանել եւ զտեղիքն գերմակ մոխրով ընուլ, եւ որով շուրջանակի պարսպեալ ամբացոյց զգերեզմաներն եւ զպարակն: Որոյ տէր Աստուած հովանի եւ պարիսպ լիցի նմա» եւ այլն:

Այս յիշատակարանը Ակինեանին յայտնի չի եղել: Սակայն ուղեգիր Հ. Ներսէս Սարգիսեանը ժամանակին այդ ձեռագիրը տեսել էր Մուշում եւ նրա բովանդակութիւնը գրի առել՝ վերաշարադրուած ձեւով, ինչպէս կարելի է դատել այն մի-երկու տողերից, որ Հ. Մ. Պոտուրեանը հաղորդել է Ակինեանին. «որ բաղում եկեղեցիս շինեաց եւ զԱմիրտուրու վանքս ի հիմանէ շինեաց տներով եւ հնցներով, եւ ետ գրել բաղում գրեանս եւ եղ ի վանս, եւ բաղմացոյց միաբանօք առաւել քան զՏաթեւու» (տես՝ Ակինեան, էջ 273): Զեռագիրը հետագայում պատկանել է Աղթամարի հաւաքածոյին, որը Վասպուրականի 1915/16 թթ. զաղթի ժամանակ տեղափոխուել է Էջմիածին, եւ այժմ կրում է 5501 թուահամարը (հմտ. «Յուդակ ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի», հտ. Ա, Երևան, 1965, էջ 102):

<sup>5</sup> Մեր No. 737 ձեռագրում Արբաշամ Քեղեցին

ապա խնդրում է (տուն 56—60) մի առ մի յիշել հանդուցեալ Վարդան Բաղիշեցուն եւ Գլակայ վանքի երախտաւորներին՝ իր պանդխտակից ընկերներ Ներսէս Արծկեցուն, Յովհաննէս Խոզեցուն (Կ. Պոլսի ապաղայ Յովհաննէս Կոլոտ պատրիարքը), Արբաշամ Քեղեցուն (Էջմիածնի ապաղայ կաթողիկոս Արբաշամ Բաղիշեցին), Միւս Յովհաննէսին (Յովհաննէս Քեղեցի), Գարբիէլին, Ստեփանոսին<sup>6</sup>, եւ այլն:

Գրիգոր Շղթայակրի այս կարեւոր Յիշատակարանը լրիւ չի ներկայացուել մասնագէտներին: Դրանից՝ Սենեքերիմ Տէր-Յակոբեանի օգտադործածը մի առանձին հատուած էր միայն: Իսկ Հ. Ն. Ակինեանը նրա մնացած մասից քաղել է միայն մանր-մունր բազմաթիւ հատուածներ՝ կրճատուածներով: Աւելին. նա տեղահան է արել Յիշատակարանի սկզբից մի մաս (տուն 4—9) եւ, սեղմումներով, այն տեղաւորել 60-րդ տնից յետոյ՝ որպէս աւարտ, իսկ 61—66 տները, որոնք իսկական աւարտն են կազմում, նա դուրս է թողել: Այսպիսի տեղափոխման համար առիթ են հանդիսացել, ըստ երեւոյթին, ընդդէմ «ի յաւարտ դրոյս հասեալ» բառերը, սակայն Ակինեանն ինքը մինչեւ այդ իրաւացիորէն նկատել էր, որ այդտեղ խօսքը Գրիգորի տաղաչափած «Վկայասանութեան» աւարտի մասին է՝ եւ ոչ թէ Յիշատակարանի:

Հրատարակում ենք Յիշատակարանը՝ իր լրիւ ու ամբողջական կերպարանքով: Տների համարակալումը՝ մենք ենք կատարել:

1. Փառք գերայգով Հօրքն բարձրեալ 'ի Որդւոյ Փրկչին համայնց եղեալ, եւ սուրբ Հոգւոյն գերալրացեալ, Յաւէտ եւ միշտ անգրացեալ:
2. Երբեակ անձանցըն յատկացեալ, Միով բնութեամբ հաւասարեալ. Աստուած եւ տէր Էիցս եղեալ, Երկնի 'ւ երկրի ստեղծօղ գովեալ:


Նշանակել է Շղթայակրի կենսագրութեան հետ կապուած մի քանի թուականներ (էջ 248բ).

«Մեծ վարդապետին ծննդեան թիւն ՌձԺԹ՝ (1670): Իսկ յորժամ եղեւ առաջնորդ Սուրբ Կարապետի վանացն ՌձԾԳ՝ (1704): Իսկ յորժամ եղեւ սուրբ Երուսաղէմայ պատրիարք էր թիվն ՌձԿԶ (1717)»:

<sup>6</sup> Այս անձնաւորութիւնների ինքնութեան մասին տես՝ Ակինեան, էջ 316—317, 325 եւ 360—378:

<sup>7</sup> Հմտ. անդ, էջ 340:

1-83



3. Որ տայ զընդոքս առատացեալ, Պէսպէս հրաշիւք յոյժ գեղգեղեալ, Եկեղեցոյ մանկանց կարգեալ, Որք հաւատով են հաստատեալ:
4. Արդ գոհութիւն նրմա դարձեալ, Որ ըզկուրիս գաչըս բացեալ, Եւ ի յաւարտ գրոյս հասեալ Իւր սուրբ շնորհօքն ամէնօրինեալ:
5. Արդ յիմ վեհիցդ իմաստնացեալ, Որք գեր շնորհօք դուք էք լրցեալ. Որք Բէ դիպիք ինչ ըզբօսնեալ Յայս սակաւ բան շարակարգեալ:
6. Խընդրեմ ի ձէնց՝ շիցիմ<sup>8</sup> հեզնեալ, Թեւ արժան եմ ստորկացեալ Վասըն բանիս անհամացեալ, Եւ աւելորդ սա՛ եւս եղեալ:
7. Զպատեառ իրիս ձեզ ծանուցեալ, Որ եւ ի յայս եղէ հարկեալ. Քանզի երբեմըն պարապեալ Առ վեղըն իմ գերայմաքեալ:
8. Ըզգիր վիպիս իմ ընթերցեալ, 'ի եղէ հոգւով յոյժ տոչորեալ Հանել ի յոտ տաղիւ չափեալ, Ինձ յիշատակ առյապա լեալ:
9. Որ եւ ըզձիւ ի յիրն սկըսեալ, Հասի ի կարգ հարանցն ընտրեալ. 'ի ի դիպմանէ ինչ յապաղեալ, Կիսակատար բանըն մնացեալ:
10. Յետոյ վեհն իմ առ Տէր փոխեալ, Վարդան արիին յոյժ պանծացեալ, Մաքուր վարուքըն սըրբասնեալ, Եւ վարժապետն գերազանցեալ:
11. Որ յԱմիրտուր վանքն էր նըստեալ, Ի հողց քաղաքէ կոչեցեալ. Եւ դըպրատուն անդր բացեալ, Զբազում որդիս ի փառս ածեալ:
12. Որքոց, տնանկաց էր խնամակալ, Եւ աղքատաց հայր նա գրտեալ. Եւ անձանձիբ յերկս աշխատեալ, Զեկեղեցիս յոլովս շինեալ:
13. Իսկ եւ վարուք յոյժ մաքրացեալ, Հոգւով մարմնով արիացեալ. Ի պահս, յաղօքս էր նա ծուծկալ, Եւ ի մարմին խոշոր գգեցեալ:
14. Յուսուցանելն արիւրանայր, Հոգւով սըրբով առատացեալ. Եւ քարոզէր նա անաչառ, Խրատէր գմարդիկ յօրէնսըն կալ:
15. Նա եւ մըտօք խորին գրտեալ, Զանյայտ ըզբանս ի յոյս ածեալ. Այլ եւ գրասէր անչափ եղեալ, Զյոլով գրեանս գրծագրեալ:
16. Եւ զարդարիչ տեղեացն օրինեալ, Եկեղեցեաց աստուածընկալ. Ըզվանորայս նա հաստատեալ, Զինքն օրինակ բարեաց ցուցեալ:
17. Վիշտըս բագումս յոքունց կըրեալ, Ըստ Պօղոսի ասիցն եղեալ, Թէ՛ ի մերոց օտարացեալ, Թէ՛ յարտաքնոց որք զնա ատեալ:
18. Այլ նա զընթացս իւր կատարեալ, Եւ ըզհաւատսն ամբողջ պահեալ, Եղեւ առ Տէր վերայփոխեալ, Յանձառ հանգիստըն պատրաստեալ:
19. Ի թուին հազար հարիւր անցեալ, Յիսուն 'ւ երեք այլ յաւելեալ. Պետըն վարժից յերկինս ելեալ, Եւ զմեզ եթող որք քափատեալ:
20. Յետ այսորիկ անդուստ ցըրուեալ, Ոչխարք հոտին աստանդ եղեալ. Յոյժ ողբալով մեկուսացեալ, Ի քաջ հովուէն մերոյ զըրկեալ:
21. Իսկ հընգեքին եղբարքս խորեալ, Հանդերձ մերովք ի մի տեղ կալ, Ի յիննակնեան տեղիս եկեալ, Որ Գլակայ վանք յորջորջեալ:
22. Սըրբոյ շիրմին մեր ծառայեալ, Կարապետին ձայնին օրինեալ, Եւ այլ սըրբոցն համագումար, Որք ի յայն վայրսն են անփոփեալ:

<sup>8</sup> Զեռագրում՝ չի լիցիմ:

- 23. Յետոյ աղէտ մեզ անդ դիպեալ վասն իմ մեղացըս ծովացեալ, Գանգի երկիր եղեւ շարժեալ, Յոյժ ահագին դըղըրդեցեալ :
- 24. Մինչ զի աղբիւրքն յորդեցեալ, Ի գոյնս արեան պըղտոր եղեալ, Եւ շամանդաղ ըզմեզ պատեալ, Մէզ եւ խաւար զմեզ պաշարեալ :
- 25. Զի սուրբ կըմբէքն բարձրացեալ Կարապետին գեղեցկացեալ, Ի վայր անկաւ կործանեցեալ, Եւ այլ շինուածք համայնք խախտեալ :
- 26. Անդ էր տեսիլ ողբով լըցեալ, Որ գհարացեալսն յարտօսք ածեալ, Զի հարսըն սուրբ պըննագարդեալ Յանկարծ եղեւ անշըբացեալ :
- 27. Եւ մեք տեսողքս աղէկիզեալ, Խոր տըրտմութեամբ յերկիր անկեալ, Այլ եւ սըրտիւք ահաբեկեալ Ընդ արեաւիրսն մեզ պատահեալ :
- 28. Ի թուին հազար իրս այս եղեալ, Հարիւր յիսուն 'ւ եօթամբք լրացեալ, Յետ Համբարձման Փըրկչին օրհնեալ, Յայն կիրակին երկիրն շարժեալ :
- 29. Աւաղ անձանցս մեք սասցեալ, Աղիողորմ զկական բարձեալ, Զի ի յաւուրքս դառնացեալ Անակնածեալ գուժիս դիպեալ :
- 30. Սակայն խնամօք Տեառն բարձրեալ, Կըրկին եղեւ նա նորոգեալ, Կաթողիկէն շքեղագարդեալ, Սուրբ Ամլորդոյ տունըն գովեալ :
- 31. Նա եւ գաւիթ յարկօք կըրկեալ, Ի յայնմ ամին եղեւ կերտեալ, Միջնորդութեամբ սըրբոյն մաքրեալ, Ի յանկ ելեալ եւ կատարեալ :
- 32. Բայց բըռնաւորքն զմեզ կեղեքեալ, Գանձըս յոլովս ի մէնչ առեալ, Ապա յետոյ հրաման տըւեալ, Զի գրածն ի գլուխ ել աւարտեալ :

- 33. Սակայն այն պարտքն ընդ հնոյն բարդեալ, Եւ տոկոսեօքն շատացեալ, Զմեզ արարին ահաբեկեալ, Այս երեք ամ զմեզ չարչարեալ :
- 34. Ի խորափիտ տեղիս մըտեալ, Երկեակ ամսօք յարեւ չեկեալ, Վասն իմ մեղաց Տէր բարկացեալ, Զհաց արտասուաց ջամբեցուցեալ :
- 35. Զջուր դառնութեան մեզ արբուցեալ, Կենօք մոլար եւ տատանեալ, Մեր քըշնամեացըն ծաղր եղեալ, Եւ ատելիք զմեզ կատակեալ :
- 36. Վա՛շ, մեզ ասեմ, եղեմ անկեա՛լ Այն չար հըպարտքն գոռոգացեալ Բարեկամաց մերոց տըրտմեալ, Յերկիր եղեմ ակընկորեալ :
- 37. Զի նախատինք մեք այնց եղեալ, Որք պարծէինն եղեմ լըռեալ Իսկ մեք որք գայս յանձինս կըրեալ, Եղաք դիւօք շառագունեալ :
- 38. Ափիբերան յոյժ կարկեցեալ, Անդուստ փութով կըրկին ցըրուեալ, Եւ ի Կարնոյ յերկիրն եկեալ, Ի նոցանէ մեք խոյս տուեալ :
- 39. Սըրտակըտուր անձամբք բեկեալ, Տըլտուր դիւօք արջնագգեստեալ, Ի մեմաստանըս գարդարեալ, Որ Հընձուց վանք է առձայնեալ :
- 40. Առ մեր եղբայրն սիրեցեալ Տելետ մաքուր խոհեմացեալ, Որ Կարապետ անուամբ կոչեալ, Եպիսկոպոս տեղոյս օրհնեալ :
- 41. Եւ յոյժ սիրով զմեզ ընկալեալ, Զօտարութիւնս մեր ժողովեալ, Վեր քան գարձանն ըզմեզ պատուեալ, Անփորձ մնացէ պետս մեր գովեալ :
- 42. Բագում աւուրքք աստէն կացեալ, Առ Տիրածնի յոտսըն անկեալ, Զի առնիցէ անձանցըս նար, Որդովն իւրով որ է օրհնեալ :

- 43. Յայսմիկ տեղոյ ըզմեզ հարկեալ Մեր ծերունի հայրըն ընտրեալ՝ Ներսէս տելետըն գովեցեալ, Նըժդեհակից ընդ մեզ եղեալ :
- 44. Թէ զվաղընջուցն կիսատ քողեալ՝ Հա՛ն ի յաւարտ Տերամբ օգնեալ Եւ մեք տըլտուր դիւօք սկըսեալ, Եւ ի կատար գաս հասուցեալ :
- 45. Շնորհօք Հոգւոյն յոյժ բարձրացեալ, Որ տայ գպարգեսս ում որ խընդրեալ Ի թուին հազար հարիւր լըցեալ, Վաթսուն ընդ այս շարակարգեալ :
- 46. ՅԱղուհացից պահոց սըրբեալ, Ի մարտ քըսանըն վընարեալ, Գարնամամտին մեր առձայնեալ, Յօր եռշաքթի եղեւ գրաւեալ :
- 47. Յորում ամի են պատրաստեալ Երկու կաղմունքն արիացեալ՝ Թուրքն եւ Մօսկովփն գօր ժողովեալ, Թըշնամութեամբ 'նդ իրեարս կըռուեալ :
- 48. Իսկ յաղթութիւն որ չգիտացեալ, Թէ ո՛ր ազգացն լիցի տըւեալ, Բաց յԱստուծոյ, որ յաջողեալ, Մինըն յաղթէ միւսըն պարտեալ<sup>9</sup> :
- 49. Արդ՝ աղաչեմ ըզտարքոյ ընտրեալ, Որք այս գըրոյս դուք հանդիպեալ, Զառնէք յոյժ զիս քըբակոծեալ, Եւ այս իրացս չըհաւանեալ :
- 50. Զոր ոչ քէ ձեզ եմ արարեալ, Առ ի յօգտել զհարքոյ կամեցեալ Եւ զի դիճ սըրտիս իմոյս լըցեալ, Յօժար մըտօք գաս յոտք հանեալ :
- 51. Իսկ քէ լիջիք իր ինչ օգտեալ Առ ի սմանէ վէպ իմացեալ Լիցիմ ի ձե՛նչ տրուպըս յիշեալ Ի տէր Փըրկիչն ամէնօրհնեալ :
- 52. Ես որ Արթունս եմ կոչեցեալ, Եւ Տարօնոյ տեսուչ կարգեալ, Ըսպասաւոր տեղոյն օրհնեալ Գլակայ վանից բարգաւառեալ :

- 53. Բայց յոյժ քափուր բարեացն եղեալ, 'Ի ի բուն մեղացըն դանդաչեալ, Եւ անարժան գահին գըտեալ, Հոգւով մարմնով ապականեալ :
- 54. Սակայն առ ոտըս ձեր անկեալ, Զձեզ աղաչեմ, ո՛վ տեսարք մաքրեալ Զմի Ողորմին ձեր չըխնայեալ, Պարգեւեցէք ձըրիւ մեզ տալ :
- 55. Գոնէ ընդ այնց յետնոց չոգեալ, Ի սուրբ յայգին սակաւ խոնջեալ, Զեր աղօթիւք 'ւ ի մեզ գըթալ, Տացէ Յիսուս զփառս իւր օրհնեալ :
- 56. Լիցի եւ վեհն իմ յիշեցեալ Մեծ վարդապետն վարդանն ընտրեալ, Տեառն փառացն արժանանալ, Ընդ սուրբ պետացըն պըսակեալ :
- 57. Նա եւ եղբարքն իմ սիրեցեալ, Որք տելետք են կոչեցեալ Ծերըն Ներսէս Արժըկեցին, Որ զմեզ ի յիրս նա յորդորեալ :
- 58. Եւ Յովաննէսն հոռոցայ եղեալ, Յոյժ գիտութեամբ շնորհօք լըցեալ Գեռու որդին իմ Աբրահամ, Գեղ գաւառէն առ իս սընեալ :
- 59. Միւս Յովաննէսն քաղցրաձայնեալ, Ի մեր յերկրէն եւ նա սերեալ Եւ Գաբրիէլ Ստեփաննոսիւ Ընդ այս լիցին առ Տէր յիշեալ :
- 60. Սոքա յոլովք են աշխատեալ Առ ի շինումն տեղոյն օրհնեալ 'Ի ի դրունս այլոցըն դեգերեալ, Զողորմութիւն յայն գահն բերեալ :
- 61. Ի յԱստուծոյ զվարձս ընկալցին Աստ եւ անդէն ի հանդերձեալն, Իրեանց ծնօղօքն նընջեցեալ, Եւ որք յերկրի են մընացեալ :
- 62. Եւ քահանայքն սըրբասնեալ, Սարկաւագունքն համայն եղեալ Ընդ մահտեսեացն կըրօնաւորեալ, Լիցին առ Տէր միշտ յիշեցեալ :

<sup>9</sup> Զեռարքում՝ պատրեալ :

63. Որք ի դրբունսն են դեգերեալ  
կարապետի տանըն օրհնեալ.  
Ողորմութեան յուսով սպասեալ.  
Միջնորդութեամբ ձայնին ընտրեալ :
64. Նա եւ ծընօղին իմ նընչեցեալ,  
Որ մարմնաւորին են կոչեցեալ,  
Ընդ հոգեւորցն լիցին յիշեալ,  
Ի ի Գրիստոսէ վարձատրեալ :
65. Արդ՝ դուք բէ մեզ գայս պարգեւեալ,  
Ըզնօղմիւն առատացեալ,  
Լիցի եւ ձեզ պարգեւս գրտեալ  
Յամէնառատ Փըրկչէն գովեալ :
66. Եւ զկայ առցէ բանըս չափեալ,  
Ի փառքս Հօր 'ւ Որդւոյն օրհնեալ,  
Եւ սուրբ Հոգոյն անեղբրացեալ,  
Այժմ յաւիտեանս յարձարեալ :  
Ամէն :

Յ. Ս. ԱՆԱՍԵԱՆ

NOTE SUR L'ÉDITION DU FRAGMENT DE L'HISTOIRE DE LAZARE DE P'ARPI, DÉCOUVERT DANS LE MS. A 82 DE LÉNINGRAD

Un très ancien fragment de l'*Histoire des Arméniens* de Lazare de P'arpi a été retrouvé et publié par P. MURADYAN et K. YUZBAŠIAN (= *Ղազար ֓արպեցու Պատմութեան Նորայայտ Պատահիկը*, dans *Banber Matenadarani*, 11, «Erevan», 1973, p. 7—32). Correspondant aux p. 80, l. 27 - p. 81, l. 13 de l'édition de Tiflis (1904), il est constitué par deux feuillets de garde du Ms. A82 du département arménien de l'Institut d'Orientalisme de Lénningrad. D'après les deux chercheurs, ce court fragment daterait des X<sup>e</sup>—XI<sup>e</sup> S. Afin de localiser le passage dans la transmission textuelle de l'oeuvre de Lazare, les auteurs énumèrent d'abord (p. 7) les éditions<sup>1</sup>, reproduisent ensuite (p. 8) la filiation des Ms. établie par G. TĒRMKRTTCHIAN<sup>2</sup> et mentionnent enfin (p. 9—10): a) le fragment de Lazare découvert par Mgr. N. POŁARYAN<sup>3</sup> dans l'homiliaire 1 de Jérusalem (correspondant à T, p. 12—28) copié en 1419; b) un extrait du même Lazare contenu

<sup>1</sup> *Ղազարայ Փարպեցու արարեալ Պատմութիւն*, editio princeps de Venise, 1793; *Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան*, 2<sup>e</sup> édit. (par L. ALISAN) de Venise, 1873; *idem*, 3<sup>e</sup> édit. de Venise, 1891; *idem*, édit. crit. (par G. TĒR—MKRTTCHIAN et D. MALXASIANC', 1<sup>e</sup> édit. de Tiflis, 1904 — désignée dans la suite par le sigle T); *idem*, 2<sup>e</sup> édit. de Tiflis, 1907; édit. du seul Prologue par G. SARGSIAN, *Փարպեցու Յառաջարանը յղկուած*, dans *Bazmavēp*, 90, (Venise), 1932, p. 444—449; *Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան*, 4<sup>e</sup> édit. (par G. SARGSIAN) de Venise, 1933.

<sup>2</sup> G. TĒR—MKRTTCHIAN, *Ղազար Փարպեցու ձեռագրերը*, dans *Ararat*, 1901, p. 542—549.

<sup>3</sup> N. POŁARYAN, *Նորագիւտ հատուած Ղազար Փարպեցու «Հայոց Պատմութեան»*, dans *Banber Matenadarani*, 8, (Erevan), 1967, p. 263—274. Voir C. SANSPEUR, *Le Fragment de l'Histoire de Lazare de P'arpi, retrouvé dans le Ms. 1 de Jérusalem*, dans *REArm.*, X, (Paris), 1973—74, p. 83—109. Ce fragment de Jérusalem est désigné dans la suite par le sigle J.

dans l'homiliaire 4803 d'Erévan<sup>4</sup> (correspondant à T, p. 18—38), daté du XV<sup>e</sup> s.

Les auteurs de l'article en viennent alors (p. 11—12) à la description du Ms. A82 du département arménien de l'Institut d'Orientalisme de Lénningrad. Issu de la collection de Van, celui-ci fut transféré en 1916 aux lieux actuels de sa conservation. Il se compose de 12 cahiers. A l'exception du premier qui ne compte plus que 11 feuillets (le folio 1 a manifestement été coupé) et du 7<sup>e</sup> qui n'en compte plus que 8, les 10 autres cahiers possèdent chacun 12 feuillets. Dans son état actuel, le *codex* compte donc 139 feuillets lignés, de 12,5×10 cm; ils portent chacun 1 colonne de 18 à 20 lignes d'écriture du type *bolorgir*. La matière est constituée par un fin parchemin de bonne qualité. Ouvrage luxueusement fini, le A82 contient de riches ornements et porte une reliure extrêmement soignée. Le propriétaire du Ms., un certain docteur Isaïe, est mentionné deux fois, aux fol. 16 R<sup>o</sup> et 89 R<sup>o</sup>; la mention du copiste, répondant au nom de Paul, a été relevée également aux fol. 16 R<sup>o</sup>. Par de subtiles déductions, M. MURADYAN et YUZBAŠIAN croient pouvoir dater le Ms. du XIV<sup>e</sup> S. Les éditeurs identifient le possesseur de l'ouvrage comme étant Isaïe de Nč'ec'i qui vécut à Glajor et mourut en 1338. Estimant qu'un *codex* aussi soigné ne peut être sorti que des mains d'un copiste jouissant d'une grande autorité, les deux philologues l'attribuent à Paul de Cilicie qui acquit une fameuse réputation, à Glajor précisément. J'ajoute de suite que l'essai d'identification du propriétaire et du copiste repose sur des bases peu sûres.

<sup>4</sup> P. MURADYAN, *Հատուած Ղազար Փարպեցու «Պատմութիւնից»*, dans *Հայագիտական Հետազոտութիւններ*, I, (Erevan), 1974, p. 194—226. Ce fragment d'Erévan est désigné dans la suite par le sigle E4.